



CCHC-ի ժամադրության չներկայանալու քաղաքականության հաստատում

Ձեր ատամնաբուժական ծառայություններ մատուցողները ցանկանում են վստահ լինել, որ ձեզ և տարածքի մյուս բնակիչներին հասանելի լինի բարձրորակ ատամնաբուժական խնամք, երբ դրա կարիքը ունեք: Մեր բոլոր հիվանդների համար ատամնաբուժական ծառայություններից առավելագույն հասանելիություն ապահովելու համար խնդրում ենք տեղյակ լինել հետևյալ ժամադրության քաղաքականության մասին:

Պլանավորված ժամադրություններ. Թեև մենք բոլոր ջանքերը կգործադրենք՝ հեռախոսով կամ փոստով հիշեցնելու ձեր առաջիկա ատամնաբուժական ժամադրության մասին, դուք, ի վերջո, պատասխանատու եք ձեր ժամադրության ամսաթիվը և ժամը հիշելու համար:

Ժամադրության հաստատում. մենք կգանգառենք ձեզ այն համարով (համարներով), որոնք դուք տրամադրել եք մեզ, ձեր նշանակված ժամադրությունից առնվազն երկու օր առաջ՝ հաստատելու, որ դուք դեռ մտադիր եք պահպանել ժամադրությունը: Եթե մենք ուղղորդվենք դեպի ձայնային փոստ, մենք կթողնենք հաղորդագրություն, որի մեջ ձեզնից պահանջում ենք, որ հետ գանգառեք մեզ ոչ ուշ, քան հաջորդ օրվա կեսօրին՝ հաստատելու ձեր ժամադրությունը պահպանելու մտադրությունը: Եթե մեզ հետ չգանգառեք, մենք կենթադրենք, որ դուք չեք ուզում պահպանել ձեր ժամադրությունը և կհեռացնենք այն ժամանակացույցից:

Ժամադրությունների չեղարկում. Եթե դուք չեք կարող ներկայանալ ձեր նշանակված ժամադրությանը, դուք պետք է գանգառեք մեզ առնվազն 24 ժամ առաջ՝ մեզ տեղյակ պահելու համար, որպեսզի մենք կարողանանք առաջարկել ձեր ժամադրությունը մեկ այլ հիվանդի: Առնվազն 24 ժամ առաջ տեղյակ չպահելը համարվում է բաց թողնված ժամադրություն:

Ուշանալ ժամադրություններին. Եթե դուք 10 րոպեից ավելի ուշ եք ներկայանում ձեր նշանակված ժամադրությանը, և ատամնաբուժական ծառայությունների մատակարարն այլևս հասանելի չէ, մենք ձեր ժամադրությունը կհեռացնենք ժամանակացույցից, և դա կհամարվի որպես բաց թողնված ժամադրություն: Ձեր ժամադրությունը կարող է հետաձգվել (եթե դուք հրատապ կամ շտապ կարիքը չունեք բուժման կամ չեք այցելում ատամնաբույժին՝ շարունակական կլինիկական վիճակի բուժման նպատակով) կամ մենք ձեզ կվերաբերվենք առանց ժամադրության հիվանդի:

Բաց թողնված ժամադրություններ. մեր շրջանում ատամնաբուժական ծառայությունների հասանելիության խիստ պակասի պատճառով մենք շատ լուրջ ենք վերաբերվում բաց թողնված ժամադրությունների նկատմամբ: Եթե դուք բաց եք թողնում մեկ ժամադրություն, գրանցում ենք, որ դուք բաց եք թողել ժամադրությունը: Դուք պատասխանատու կլինեք գանգառել կլինիկա՝ ձեր ժամադրությունը փոխելու համար:

Եթե նույն օրացուցային տարվա ընթացքում բաց եք թողնում երկրորդ հանդիպումն առանց պատշաճ տեղեկացման, ձեզ փոստով կուղարկվի հայտարարության նամակ:

Մեկ տարվա ընթացքում երեք բաց թողնված ժամադրություններից հետո դուք այլևս չեք կարողանա ժամադրություն նշանակել CCHC ատամնաբույժի հետ՝ կանոնավոր ատամնաբուժական խնամք ստանալու համար:



Comprehensive Community Health Centers

Խնդրում ենք խոսել ատամնաբուժական անձնակազմից որևէ մեկի հետ, եթե հարցեր ունեք մեր «Ժամադրության չներկայանալու քաղաքականության» վերաբերյալ:

Ես հասկանում և համաձայն եմ պահպանել այս «Ժամադրության չներկայանալու քաղաքականություն»-ը:

Հիվանդի անունը՝ _____ Հիվանդի ստորագրությունը՝ _____

Ծնողի/խնամակալի ստորագրությունը (մինչև 18 տարեկան հիվանդների համար)

Ամսաթիվ _____